

Մանուկ Ա. Հարությունյան
Փիլիսոփ. գիտ. թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՅԻՈՆԱԼ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Քաղաքագետի խոհեր՝ խորհրդարանական ընտրությունների
նախաշեմին*

Որո՞նք են Հայաստանի արդիականացման հիմնական ինստիտուցիոնալ ու սոցիոմշակութային խոչընդոտները և ինչպե՞ս պետք է հաղթահարվեն դրանք. ինքնաբերաբար քարշ գալով իրադարձությունների ետևից, թե՞ ակտիվորեն մասնակցելով պետականության ամրակայման ռազմավարական նոր նախագծի ձևավորմանը: Ի՞նչ գործոնների և մեխանիզմների շնորհիվ կարելի է դուրս գալ ստեղծված փակուղային իրավիճակից, ապահովել Հայաստանի կայուն զարգացումը, որը ոչ մի ընդհանուր բան չունի ներկայիս լճացման հետ:

Երկրի օրակարգում դրված են սկզբունքային հիմնահարցեր, որոնց լուծումը թելադրվում է ինչպես հայոց պետականության և ժողովրդի պահպանման ու զարգացման տրամաբանությամբ, այնպես էլ համաշխարհայնացման մարտահրավերներով: Առկա սպառնալիքները հրամայաբար պահանջում են Հայաստանի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական հարաբերությունների ողջ կառուցվածքի համակարգային արդիականացում, ինչն անհնար է առանց **ավտորիտարիզմի, բյուրոկրատիզմի, կոռուպցիայի, իրավական ցեղիկիզմի, կլանայնության** և այսպես կոչված՝ **կլիենտելիզմի** պետականակործան մեխանիզմներն արմատախիլ անելու: Սակայն ոչ անմեկին՝ «հեղափոխության», չմտածված «ճեղքումների» և ոչինչ չարարող ամբոխավարական ժխտականության եղանակով: Ոչ էլ առավել ևս՝ լճացումը, քաղաքական և տնտեսական ընտրանիների անմրցունակությունը և կոռուպցիայի բարձր մակարդակը ամեն կերպ պահպանելու, ազգանպաստ փոփոխություններին դիմադրելու, սեփական կարգավիճակը և արտոնությունները «հավերժացնելու» եղանակով: Երկու դեպքում էլ նման քաղաքականության «շնչառությունը» կարճատև է, սահմանափակված իշխանությունը և սեփականությունը պահպանելու կամ դրանք վերաբաժանելու պատեհապաշտական նկրտումներով:

*Մեզանում ինչ-որ ամուսնով արդեն համոզվումք դարձած ճշմարտությունների և դրանց իրականացման հնարավորությունների միջև Հայաստանում այսօր ստեղծվել է արգելքների թանձր պատ, որոնց հաղթահարմանը կարող է նպաստել Մանուկ Ա. Հարությունյանի սույն հրապարակումը: Խմբ.: Հոդվածն ընդունվել է տպագրության 17.03.2012:

Բացասական երևույթների հիմնապատճառները պետք է փնտրել քաղաքական գործունեության նկատմամբ համազգային վերահսկողության ծայր աստիճան թուլության, Հայաստանում քաղաքացիական հասարակության անզարգացածության, հայի ինքնակերտող պատմական կամքի հանգրվանային ուժասպառման մեջ: Այսօր շատ են խոսում քաղաքական գործընթացներին ժողովրդավարական շունչ հաղորդելու, քաղաքական համակարգը «վերակենդանացնելու-նորոգելու» մասին: Բայց նշյալ «վերակենդանացման» քայլերը ձեռնարկելուց առաջ պետք է ախտորոշել հիվանդության սկզբնապատճառները:

Հայաստանի գոյության ներքին ռիսկերն ու սպառնալիքները մեծացնող ինստիտուցիոնալ և մշակութային արգելքներն իրենց արմատներով ձգվում են մինչև խորհրդային անցյալը: Անկախության քսան տարին չափազանց կարճ ժամանակ է այդքան արմատավորված ավանդույթների հաղթահարման համար: Սակայն ճշմարիտ է և այն, որ նման պրոբլեմները համակարգված ձևով և խորությամբ առ այսօր չեն հետազոտվել: Տարածաշրջանային մարտահրավերներն ու ներքին հանգամանքները պարզապես մեզ ժամանակ չեն թողել Հայաստանի համակարգային արդիականացման նոր, ազգային-ժողովրդավարական նախագծի մշակման համար: Չեռնամուխ լինելով դրան՝ խելամիտ չի լինի անտեսել Արևելյան Եվրոպայի երկրներում և հետխորհրդային տարածքում, մասնավորապես Ռուսաստանում և Գաղափաստանում իրականացված արդիականացման նախագծերի դասերը: Արդեն իսկ ակներև է, որ այսօր գոյություն չունի արդիականացման հաջողության համընդհանուր դեղատոմս՝ հիմնված թեկուզ իրեն միանգամայն արդարացրած՝ Արևմուտքի փորձի մեխանիկական փոխառության վրա, քանզի պետք է նկատի ունենալ պատմական ու սոցիոմշակութային հանգամանքների տարբերությունը: Իսկ Ռուսաստանի և Գաղափաստանի արդիականացման պրակտիկայի իմաստավորումից պիտի քաղել ազգային ինքնասիրության համար դառը, բայց բուժիչ դեղատոմսեր, կատարել անհրաժեշտ հետևություններ, ուստի առանց դրա իմաստ չունի վերստին կանգնել անխոհեմ փորձարարության ուղու վրա:

Առանձնահատուկ խնդիր է ավտորիտարիզմի հարցը, որի ուսումնասիրության հրատապությունը բխում է սոցիալ-քաղաքական գործընթացների իմաստավորման և արդյունավետ քաղաքական կառավարման, իսկ ավելի լայն իմաստով՝ ազգային-ժողովրդավարական արդիականացման նոր նախագիծ մշակելու անհրաժեշտությունից:

Ժամանակակից ամերիկացի քաղաքագետներից Լ.Լ.Լինցը ավտորիտար կառավարման էական գծերը տեսնում է նրանում, որ «կառավարող խումբը» «պատասխանատվություն չի կրում ոչ մի ընտրովի մարմնի առջև և չի կարող զրկվել իշխանությունից խաղաղ ինստիտուցիոնալ միջոցներով»¹: Մոտավորապես նույն կերպ է ավտորիտար վարչակարգը բնութագրում նաև ֆրանսիացի անվանի քաղաքագետ Ռ.Արոնը²:

Ավտորիտար կառավարման ուղին կապված է համակարգային ռիսկերի հետ: **Նախ**, այդ ուղին ելնում է այն կարծեցյալ առաջադրույթից, որ բարեփոխումների «դեմիուրգ-արարիչները» օժտված են երկրի առջև ծառայած բոլոր պրոբլեմները գիտակցելու մենաշնորհով: Աստծո փոխանորդ կարգվելու այս մեծամոլիկ հա-

1 Линц Л.Л. Авторитаризм и демократия в “третьем мире”. М., 1991, с.146.

2 Стен Арон Р. Демократия и тоталитаризм. М., 1993, с. 78-79.

վակնությունը ազգավտանգ ամբարտավանության արդյունք է, իսկ բանական ողջախոհության տեսանկյունից նման մոտեցումը զուրկ է տեսական-մեթոդաբանական հիմքերից: Ուստի Հայաստանի արդիականացման նպատակների ռացիոնալ ընտրությունը պահանջում է համալիր և համակողմանի մոտեցում, որը դժվար է ապահովել նույնիսկ լայն բանավեճի շրջանակներում: Իսկ քաղաքական ներփակվածության դեպքում շանսերն իսպառ կորսվում են, քանի որ տարբեր տեսակետների բացակայությունը հանգեցնում է ելակետային դիրքավորման ձևախեղմանը, որն, իր հերթին, բացասաբար է անդրադառնում արդիականացման նպատակների ու խնդիրների հետագա փոխակերպման ընթացքի վրա: **Երկրորդ**, ավտորիտարիզմն անխուսափելիորեն կազմաքանդում է հակադարձ կապերը, աղավաղում է «ներքևից» եկող ազդանշան-հաղորդումները գործերի իրական վիճակի մասին: Կառավարումը դառնում է անբովանդակ, ինչը հանգեցնում է պետության և հասարակության փոխօտարման խորացմանը: Հակադարձ կապերը, ընդհակառակը, մվազեցնում են սխալով հղի կառավարչական ռիսկերը, ստեղծում են նախադրյալներ արդիականացման խնդիրների սրբագրման, շտկման համար: Կործանարար է իշխանության գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողության ու նախաձեռնության սահմանափակման ձգտումը: Այսօր, երբ քաղաքական սուբյեկտների ակտիվության և ինքնուրույնության մակարդակի բարձրացումը դարձել է օրվա հրամայականը, ավտորիտարիզմն ունակ է կործանելու նույնիսկ սկզբնապես գրավիչ արդիականացման նախագիծը:

Հայաստանի ավտորիտար քաղաքական համակարգն ուսումնասիրելիս հարկ է գիտակցել, որ նրա գլխավոր բաղադրիչը **կորպորատիվ պետությունն** է, որը տնտեսական ընտրանին և պետական գերատեսչությունները միավորել է կոշտ կառավարչական հիերարխիայի մեջ: Դա ցույց է տալիս, որ պետական ինստիտուտները միշտ չէ, որ ստեղծվում են սոցիալապես արդյունավետ լինելու համար: Ավելի ստույգ՝ ինստիտուտները կամ ձևական-բյուրոկրատական կանոնները ստեղծվում են նրա համար, որպեսզի ծառայեն նրանց շահերին, ովքեր պաշտոնական դիրք են զբաղեցնում, ովքեր հնարավորություն ունեն ազդելու «խաղի նոր կանոնների» ձևավորման վրա: Հայկական ավտորիտարիզմի հետ սերտորեն կապված է նաև բյուրոկրատիան՝ նախագահական կառավարման գլխավոր հենարանը: Անցած տարիներին նախագահ Ս.Սարգսյանին այդպես էլ չհաջողվեց կերպարանափոխել հայկական բյուրոկրատիան. այն եղել ու մնում է եսամոլ և շահատենչ քաղաքական ձգտումների կրողը: Ուստի իր ամբողջությամբ Հայաստանը մնում է որպես ոչ այնքան՝ փոխակերպվող, որքան՝ «կառավարվող» կամ նույնիսկ «չափազանց կառավարվող» ժողովրդավարության ցայտուն օրինակ: Այս եզրույթը արտացոլում է Հայաստանում իշխանության վերարտադրության տրամաբանությունը և ժողովրդավարական ինստիտուտների օգտագործման ավտորիտար-բյուրոկրատական եղանակը՝ իշխանության մենաշնորհը պահպանելու նպատակով: Ավտորիտար իշխանությունը և բյուրոկրատիան Հայաստանում կարծես թե հետապնդում են երկակի նպատակներ. նրանք խոսքով դեմ չեն շուկայական տնտեսության զարգացմանը, անգամ պատրաստ են դա խրախուսել, սակայն պատրաստ չեն հրաժարվել իշխելու հնարավորությունից: Պատրաստ չեն ընդունել այնպիսի որոշումներ, որոնք պահանջում են սահմանափակել բյուրոկրատիայի քաղաքական տիրապետման հնարավորությունները

կամ անձնական (խմբային) շահերը՝ հանուն երկրի արդիականացման: Հայրենական բյուրոկրատիայի հաջողության գլխավոր խորհրդանիշը, ինչպես և ամենուր, ստատուսն է (իրավակացությունը), որը հետխորհրդային ավտորիտար, օլիգարխիական կապիտալիզմի պայմաններում նոր վերածնունդ է ապրում: **Ստատուսի կամ իրավակացության** մեջ մարմնավորված է եկամտի մակարդակի և պաշտոնական դիրքավորման միասնությունը:

Ասում են, թե լինում է ազգային բյուրոկրատիա, որը պատասխանատվությամբ է կատարում իր գործառույթները: Սակայն արգասաբեր բյուրոկրատիան հնարավոր է որպես կառավարման ապարատ, որը մշտապես վերահսկվում է հասարակության, ինչպես նաև քաղաքական լիդերների կողմից և ծառայում է նրանց: Հետխորհրդային հայկական բյուրոկրատիան իր համար վաղուց է հայտնագործել թույլ պետականության «անդիմադրելի հմայքը»: Նա ձգտում է ստեղծել քաղաքական ներկայացվածության պատրանք՝ իրականում սահմանափակելով բնակչության մեծամասնության շահերի և կարծիքների լիարժեք ներկայացվածությունը: Հայաստանում «կառավարվող ժողովրդավարության» մոդելը տնտեսական և քաղաքական ընտրանում պատմեշավորել է քաղաքացիների օրինական հավակնություններից և պահանջներից: Հենց ժողովրդի հիմնարար պահանջումների նկատմամբ քամահրական վերաբերմունքն է Հայաստանի քաղաքական համակարգի առավել խոցելի կողմը: Ուստի զարմանալի չէ, որ օրինականության և անկախ արդարադատության վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները մնում են մերկախոս դեկլարացիաներ, որոնք ամրապնդված չեն գործով:

Հասարակական վերահսկողության արդյունավետ համակարգը հենց լիիրավ ազգային ժողովրդավարությունն է: Այն բացառում է ավտորիտարիզմը և բյուրոկրատիզմը: Հայաստանի արդիականացման ճանապարհին ծառայած ինստիտուցիոնալ և սոցիոմշակութային արգելքներից է նաև **կոռուպցիան**, որը Հայաստանի պետապարատի աքիլեյան գարշապարն է: Այսօր պաշտոնական դիրքը դարձել է հարստանալու դյուրին միջոց: Պաշտոնը, արտոնությունները հաճախ արժեքավորվում են որպես սեփականության ձևեր: Դրանք ունեցողը մեծ մասամբ չարաշահում է իր դիրքը: Եթե մարդու միակ սեփականությունը պաշտոնն է, նրա անձնական բարգավաճումն անբաժան է այդ պաշտոնից: Այսպիսին է ներկայիս կառավարչական ընտրանու «քաղաքական» գաղափարախոսությունը:

«Ով ում մարդն է, ում դրածոն» հայտնի սկզբունքը արտացոլում է Հայաստանի կառավարման համակարգի ավտորիտար և կորստաբեր բնույթը: Չկա այնպիսի վիճակագրություն, որը ցույց տար, թե կառավարման վերին օղակների արտաքին ցուցամիտների ետևում ինչպիսի «փոխշահավետ» գործարքներ են կնքվում, թե ինչպես է ծրագրվում, օրինակ՝ պատգամավորների «քաղաքական կամքը» և թե ովքեր են այդ անդրկուլիսյան գործարքների իսկական պատվիրատուները: Կամ թե, ի վերջո, ո՞վ է ռեժիսորն ու անդրկուլիսյան խաղերի այն վարպետը, որը յուրացրել է ստվերում մնալու արվեստը, ո՞վ է, որ երևութապես դուրս է մնում հասարակական տեսանելիությունից, սակայն վստահաբար զբաղեցնում է պետկառավարման համակարգի «գորշ կարդիմալի» գաղտնադիրքը: Կոռուպցիայի հիմնական ձևերն են պաշտոնական ձեռնարկատիրությունը, «տանիքավորումը», կաշառակերությունը, պետական բարձր պաշտոններում խոշոր ֆիրմաների ներկայացուցիչներին «դեսանտ իջեցնելը»:

Քանի որ Հայաստանում կոռուպցիան ունի համակարգային բնույթ, ուստի անհրաժեշտ է «**քաղաքական կոռուպցիա**» հասկացության իմաստի ճշգրտումը. «սովորական» կոռուպցիայի և քաղաքական կոռուպցիայի միջև խստիվ և միանշանակ կերպով որոշակի սահման չի կարող դրվել. թերևս կարելի է ասել, որ այս երկուսի միջև «չինական պարիսպ» չկա: **Պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից իրեն վստահված պետական-իշխանական լիազորությունների և իրավունքների, պետիշխանության համակարգում ծառայողական դրության, կարգավիճակի, իշխանության օգտագործումն անձնական կամ խմբային նպատակներով (այդ թվում՝ երրորդ անձանց օգտին), հակաիրավական եղանակներով քաղաքական օգուտներ քաղելը ոչ այլ ինչ է, քան կոռուպցիայի առանձնահատուկ տեսակ՝ քաղաքական կոռուպցիա:** Հայտնի է, որ դրա հիմքը, նախևառաջ, պետական իշխանության վարչական ռեսուրսի ապօրինի օգտագործում- չարաշահումն է: Ժողովրդավարական պետություններում վարչական ռեսուրսները, որոնք գտնվում են պաշտոնաբար անձանց կառավարման և հսկողության ներքո, օգտագործվում են որոշակի նպատակներով, մասնավորապես՝ ի պաշտպանություն հասարակական, հանրային շահերի³: Իսկ պաշտոնատար անձանց կողմից վարչական ռեսուրսների չարաշահումը նշանակում է դրանց օգտագործում ոչ ուղղակի նշանակությամբ: Այդ պրակտիկան կյանքի է կոչում իր «օրենքները», որոնք գործում են այնքան ժամանակ, քանի դեռ պահպանվում են նրանց վերարտադրության պայմանները: Հասարակական ու ազգային շղարշի ներքո մեզանում զարգանում է այսպես կոչված՝ փանջունիական «ուլթրա ապակեդրոնացումը», որի էությունը ինքը՝ ընկեր Փանջունին, մեկնաբանում էր այսպես. «... ամեն հայ անհատ, ինքն իր մեջ, ամբողջություն մըն է և կը ներկայացնե ամբողջ հայությունը: Ա՛ն, որ որևէ միջոցով կը հաջողի ինքնզինք փրկել, փրկած կը լինի նաև ամբողջ հայությանը...»: Եվ այն հարցին, թե արդյո՞ք դա էգոիզմ չէ՞, Փանջունին տալիս էր հետևյալ պատասխանը.

«- Չէ՛, - գոչեց ընկեր Փանջունին, - էկոիսմ կ'ըլլա այն ատեն, երբ իբրև մարդ մեր անձը փրկել ջանանք, բայց երբ իբրև հայ ջանանք փրկվել, այն ատեն կը լինի հայրենասիրական գործ...»⁴: Մեր նորօրյա պաշտոնատար-կաշառակերները գրեթե նույն կերպ են մտածում, միայն թե «փրկվելու» փոխարեն ձգտում են «հարստանալ»: Նրանք հաճախ իմաստախոսում են. «Եթե ես հարստացել եմ, ուրեմն հարստացել է հայությունը», «Եթե նա հարստացել է, ուրեմն հարստացել է Հայր»:

Հայաստանում քաղաքական կոռուպցիան, ինչպես և կոռուպցիայի «սովորական» տեսակները, ձևախեղում են քաղաքական և պետական իշխանության գործառնության մեխանիզմները, աղավաղում են պետական կառավարման հասարակայնորեն նշանակալի նպատակներն ու խնդիրները: Քաղաքական կոռուպցիան ոչ միայն ներսից է քայքայում պետական իշխանության համակարգը, այլ նաև պարարտ հող է ստեղծում բյուրոկրատական միջավայրում կոռուպցիայի պաշտոնեական, գործարար և այլ տեսակների լայն տարածման համար: Մեզանում քաղաքական և պետական գործիչը, ով հասել է իշխանության քաղաքական կոռուպցիայի շնորհիվ, այնուհետև նրա պահպանման միջոցով կորցնում է կոռուպցիայի մյուս բոլոր տեսակների նկատմամբ բարոյական դիմադրողակա-

3 Տե՛ս **Афанасьев М.** Клиентелизм и действительность. М., 2000, с. 9.

4 **Օտյան Ե.** Ընկեր Փանջունի, Եր., 1989, էջ 210-211:

նությունը («իմունիտետը»):

Հայոց պետականության թուլությունը դրսևորվում է քաղաքական կոռուպցիայի ևս մի տարատեսակի՝ վարչական կոռուպցիայի տեսքով: Եթե կաշառելու փորձի դեպքում հնարավորություն կա դիմելու օրենքի ներկայացուցչին կամ պարզապես հասկացնել տալու, որ դատավճիռը չի կարելի «նկարել», ապա վարչական ճնշման դեպքում Հայաստանում դատավորը գործնականում ընտրություն չունի: Այստեղ բավական է նշել երկու պահ: Նախ՝ ի տարբերություն վեբերյան բյուրոկրատական ինստիտուտների, որոնք ունեն անանձնական, գործառութային ուղղվածություն, Հայաստանում բյուրոկրատական ինստիտուտները ծայրեծայր հագեցած են մարդկային հարաբերություններով, անձնական կապերով, շահերի շղթաներով, որոնք ներթափանցում են հասարակական կյանքի բոլոր ոլորտները, նախևառաջ՝ պետության և բիզնեսի, գործադիր և դատական իշխանությունների ոլորտները: Ուստի զարմանալի չէ, որ այսօր Հայաստանում արդարադատության գլխավոր պրոբլեմը ոչ թե սովորական կոռուպցիան է, այլ դատավորների մեծ կախվածությունը պաշտոնյաներից, ոչ ֆորմալ կապերի ցանցերից:

Երկրորդ, տպավորությունն այն է, որ օրենքը և «արդարադատությունը» կարծես թե դարձել են ոմանց քաղաքական կարիերայի, պատվախնդրության կամ նույնիսկ վրեժխնդրության «ամենաարդյունավետ» գործիքը: Կոռուպցիան հայկական բյուրոկրատիայի յուրօրինակ քաղաքական ստվերն է, նրա խմբակային շահերի ցայտուն դրսևորումը: Կոռուպցիան չի կարող լինել առանց բյուրոկրատիայի, ինչպես և բյուրոկրատիան՝ առանց կոռուպցիայի: Համոզված ենք, որ Հայաստանում վարչական բարեփոխումների արդյունքում նոմենկլատուրային բյուրոկրատիայի շարքային պաշտոնյաների կամայականությունները չեն նվազել:

Ինչի՞ց են գլխավորապես դժգոհ Հայաստանի շարքային քաղաքացիները: Նախևառաջ՝ կրթության ոլորտի, ոստիկանության և դատական համակարգի կոռումպացվածությունից: Այնինչ՝ Transparency International (TI) միջազգային կազմակերպության հայկական գրասենյակի տնօրենին զարմացրել է այն փաստը, որ 2009 թ. անցկացված հարցման արդյունքներով, հարցված քաղաքացիների 43 տոկոսը գտնում է, որ 2010 թ. համեմատությամբ այդ թիվը նվազել է մինչև 22 տոկոս⁵: Ի՞նչ զարմանալի բան կա այստեղ: Նույն TI զեկույցում նշված է, որ կաշառակերությունն ամենից շատ հարվածում է բնակչության աղքատ խավերին: Բայց տարիմաստությունն այն է, որ որքան ցածր է եկամուտը, այնքան ավելի հաճախ է շարքային քաղաքացին ստիպված լինում կաշառել զանազան ծառայությունների: Նկատի ունենալով, թե ինչպիսի աղետաբեր արագությամբ է կյանքը թանկանում Հայաստանում, զարմանալի չէ, որ քաղաքացիների մեծամասնության մոտ այլևս փող չի մնացել... նույնիսկ կաշառքի համար:

Վերածնակերպելով Ռուսաստանի նախագահ Դ.Մեդվեդևի խոսքերը, կարելի է ասել, որ հայկական բյուրոկրատիան ևս պարբերաբար ցնցումնահարում է բիզնեսը, որպեսզի այն չանի ինչ-որ բան «ոչ այնպես»: Նաև ձգտում է վերահսկողություն հաստատել ՉԼՄ-ների վրա, որպեսզի չասեն այն, ինչը չի կարելի ասել, միջամտում է ընտրական գործընթացներին, որպեսզի չընտրեն նրանց, ում չպետք է ընտրեն, ճնշում է գործադրում դատարանների վրա, որպեսզի հանկարծ չդատապարտեն նրանց, ում չպետք է դատապարտեն: Այլ կերպ ասած՝ պետական

5 Տե՛ս «Голос Армении», 14 декабря 2010 года.

ապարատը և՛ ամենամեծ աշխատատուն է, և՛ ամենասկտիվ հրատարակիչը, և՛ լավագույն պրոդյուսերը: Ամենագոր բյուրոկրատիան ստեղծում է ոչ միայն կոռուպցիա, այլև ծնում է զանգվածային իրավական նիհիլիզմ⁶:

Հայաստանի ազգային-ժողովրդավարական արդիականացման նախագծի իրականացման էական խոչընդոտներից է **իրավական նիհիլիզմը**՝ օրենքի նկատմամբ հարգանքի բացակայությունը, որը, ինչպիսի՛ պարադոքս, դրսևորվում է առաջին հերթին հենց քաղաքական իշխանության և տնտեսական ընտրանու կողմից: Այնպես որ, Հայաստանում իշխանության հեղինակությունը նախկինի պես վեր է օրենքների հեղինակությունից, որի պատճառով էլ մեզանում գործում է ոչ թե օրենքի, այլ իշխանության ուժը, գերիշխում է ոչ թե իրավունքի իշխանությունը, այլ իշխանության իրավունքը:

Հայաստանում պաշտոնական ինստիտուտների արտաքին քաղաքի ներսում քողարկվում են միջանձային հարաբերությունների տեղական ցանցերը, որոնք հիմնված են մասնավոր, ոչ պաշտոնական արժեքների վրա: Այս մոդելը նախադրյալներ է ստեղծում համակարգային կոռուպցիայի համար: Անհրաժեշտ մարդուն կաշառելը, որն իր ազդեցությամբ կարևորվում է այդօրինակ ցանցերի անդամների համար, հաճախ նշանակում է ողջ ինստիտուտի նկատմամբ վերահսկողության սահմանում:

Կոռուպցիայի վերը նշված մոդելը նորություն չէ հետխորհրդային շրջանի համար: 1970-1980 թվականների պետական կառավարման իրական մեխանիզմների գիտակները նշում են, որ նախկին ԽՍՀՄ-ի որոշ տարածաշրջաններում ինչ-որ աննշան մի հաշվապահ կարող էր հայտնվել կոռուպցիայի ցանցի կենտրոնում, ցանց, որով կարելի էր ծածկել վիթխարի տնտեսական տարածք: Սակայն, անտարակույս, նման հաշվապահները չէին կարող երագել ողջ պետության սեփականաշնորհման մասին, որի շեմին հայտնվեց խորհրդային երկիրը 1980-ականների վերջերին: Այս մասնավոր շահերի գործողությունների տարածքի ընդլայնումը տեղի էր ունենում վստահության տարածքի մեջ ներառված «օղակների» թվի աճի հաշվին՝ «յուրայինների» երաշխավորությունների և երաշխիքների միջոցով:

Միջանձնային վստահության շղթաները, ընդարձակվելով և միահյուսվելով, կազմում էին բարդ կառուցվածքներ, որոնցում փոխադարձ վստահությունը պահպանվում էր խախտողների նկատմամբ կոլեկտիվ պատժամիջոցներով: Հարկ է նշել նաև քրեական բառապաշարից վերցված «հասկացությունների» (ռուսերեն՝ «պոնյատիաների») դերը հարաբերությունների նման համակարգի ձևավորման գործում:

Ակներև է, որ Հայաստանում առանձնապես ուժեղ են ոչ ֆորմալ օլիգարխիական կամ բյուրոկրատական կլանների դիրքերը: Դրանք, սովորաբար, կառուցվում են պատրոն-կլիենտ (իր գործերի վարումն ուրիշին հանձնած անձ - Մ.Հ.) հարաբերությունների, այսպես կոչված՝ **կլիենտելիզմի** սկզբունքի վրա: Հայաստանաբնակ հայերի մեծամասնությունը գտնում է, որ սոցիալական, քաղաքական կյանքում ինչ-որ բանի հասնելու լավագույն միջոցն անձնական կապերն են: Այս երևույթն առկա է բոլոր հետխորհրդային հասարակություններում: 1990-ականների վերջերին Ռուսաստանում անցկացված սոցիոլոգիական հետազոտություն-

6 Ст'и Послание Президента Российской Федерации Д.А.Медведева Федеральному Собранию Российской Федерации, Москва, 5 ноября 2008 г.

ները ցույց են տվել, որ հարցվածների 84 տոկոսը կողմնորոշված է դեպի անձնական կապերը⁷: 2004 թ. նույնաբնույթ արդյունքներ են գրանցվել ՌԳԱ Սոցիոլոգիայի ինստիտուտի կողմից անցկացված հարցման ընթացքում: Այն հարցին, թե «Ի՞նչն է օգնում գտնել լավ վարձատրվող աշխատանք», հարցվածների 66,7 տոկոսը վկայակոչել է անձնական կապերը և ծանոթությունը⁸: Սակայն օգտաշահ կապերն ու ծանոթությունները ակտիվորեն օգտագործվում են միայն «որոշակի սոցիալական շրջանակներում» (ընդգրկում է բնակչության 10-14 տոկոսը)⁹: Խոսքն, իհարկե, պետական մարմիններում, բիզնեսում ազդեցիկ մարդկանց հետ անձնական կապերի ցանցի մասին է:

Հետխորհրդային հայկական կլիենտելիզմը ընդհանրության եզրեր ունի չինական ընտանեկանության (գուանսի) և լատինաամերիկյան ֆամիլիզմի հետ, այն բավարարում է վստահության պահանջմունքը¹⁰: Դա հնարավոր է առավելապես նեղ շրջանակներում, այն էլ միայն «յուրայինների» համար՝ ոչ ֆորմալ անձնական կապերի, ընտանեկան-ազգակցական հարաբերությունների հիման վրա: Հիշեցնենք, որ Մ.Կաստելը գրել է տայվանյան և հոնկոնգյան ընտանեկան բիզնեսի ցանցային կառուցվածքի մասին՝ այն համարելով նոր խոսք ձեռնարկատիրության կապիտալիստական կազմակերպման բնագավառում¹¹:

Անկախ Հայաստանի քսանամյա պատմությունը ցույց է տալիս, որ ոչ ֆորմալ, անձնական կապերը մեծ դեր են խաղացել և խաղում են ոչ միայն գործարար հարաբերություններում: Անձնական կապերի ստեղծումը և «աճեցումը» մեզանում դիտվում է որպես բիզնեսում կամ քաղաքականության մեջ հաջողության կարևորագույն պայման: Ոչ ֆորմալ փոխադարձ պարտավորությունները, որոնք բնութագրվում են տնականության և փոխվստահության հատկանիշներով, նման են ազգակցական հարաբերություններին: Այս ամենը հանրապետությունում, նոր ձևերի ներքո, վերածնել է **տոհմացեղային-կլանային հարաբերությունները**:

Հետխորհրդային տարածքում ոչ ֆորմալ, անձնական կապերը ստացել են «բլատ» ռուսերեն անվանումը: Սակայն «բլատ»-ն ավելի շուտ խորհրդային տնտեսության երևույթ էր, որը սերտորեն կապված էր ապրանքային դեֆիցիտի հետ: Աստիճանաբար այն վերացավ՝ շուկայական տնտեսությանն անցման փուլում: Բայց պահպանվեցին և զարգացան այլ տեսակի ոչ ֆորմալ կապեր: Դրանց բնորոշ օրինակն են թաղապետարանային կապալի բաշխման ժամանակ շինարարական որոշ ընկերությունների հատուկ կապերը թաղապետարանների վարչակազմերի հետ: Ակներև է, որ դրանք ավելի շուտ կոռուպցիոն կապեր են, կապերի ցանցեր: Հենց այդ կապերի վրա են հիմնված փոխադարձ պարտավորությունների ցանցերը, տարատեսակ ռեսուրսների (տեղեկատվական, նյութական և իշխանական) փոխանակումները, որոնք ստանում են համընդհանուր փողային արտահայտություն: Անտարակույս, հայկական ինստիտուցիոնալ համակարգը որոշակի փուլում ձեռք բերեց համընդհանուր շուկայական բնույթ՝ «ամեն ինչ ներկայացված է վաճառքի»: Փողային համարժեքով են հաշվարկվում գործնականում բոլոր ռեսուրսները, որոնց փոխանակմամբ է ուղեկցվում տնտե-

7 Տե՛ս **Афанасьев М.** Клиентелизм и действительность. М., 2000, с. 9.

8 Տե՛ս Российская идентичность в условиях трансформации. М., "Наука", 2005, с.63.

9 Տե՛ս նույն տեղում:

10 Տե՛ս **Афанасьев М.** Клиентелизм и действительность. М., 2000, с. 9.

11 Տե՛ս **Кастельс М.** Информационная эпоха: экономика, общество и культура. М., ГУ ВШЭ, 2000, с. 179-180.

սական, սոցիալ-քաղաքական և պետական գործառնությունը:

Ուստի խնդիրն այն է, թե այդ «կապեր-հարաբերությունները» ինչպե՞ս են ազդում Հայաստանի տնտեսական և քաղաքադաշտական մթնոլորտի վրա: Թե՛ ազգակցական, թե՛ խնամիական և թե՛ շահադիտական նպատակներով օգտագործվող կապերը սատարում են բացառապես «յուրայիններին», իսկ «օտարներին» շրջափակում-դեն են նետում՝ ի չիք դարձնելով սոցիալական հնարավորությունների ազատությունը: Հետևաբար, այդ «կապեր-հնարավորությունները» էապես արգելափակում են Հայաստանի տնտեսության և քաղաքական համակարգի ժողովրդավարացման հեռանկարները: Այսպիսով, ոչ պաշտոնական, անձնական կապերի ցանցերի լայն տարածվածությունը արդիականացման հայկական մոդելի արգասիքն է, պատկերավոր ասած՝ «կարման»: Բանն այն է, որ կլիենտար ձևով կազմակերպված սոցիալական ցանցերը ամենօրյա հասարակական կյանքում լրացնում են «պետության պակասությունը» և «վստահության դեֆիցիտը»: Այդ ցանցերը քայքայում են Հայաստանի հանրային ինստիտուտները՝ դառնալով հայոց ազգապետությունից ժողովրդի աճող օտարման ազդակներ:

Հայաստանին սպառնացող վտանգները շատ են, սակայն ընտրություն հնարավոր է կատարել միայն երկրի ազգային-ժողովրդավարական արդիականացման նախագծի և խորացող լճացման, ավելի խիստ՝ ազգային ինքնասպանության միջև: Հայաստանը կա՛մ կդառնա զարգացած շուկայական տնտեսությամբ և ժողովրդավարական ինստիտուտներով ժամանակակից ազգային պետություն, կա՛մ այն չի լինի տարածաշրջանի նշանակալի երկրաքաղաքական և սոցիալ-քաղաքական սուբյեկտ:

Ազգային-ժողովրդավարական արդիականացման նախագծի իրականացման ռազմավարական բանալին կամ մեթոդը ժողովրդավարությունն է՝ հայրենասիրության և արդարության հետ միասին: Թեև այս հետևությունն այնքան էլ նոր չէ, բայց ավելի խոր և բովանդակային հիմնավորումների կարիք ունի:

Հայտնի է, որ ժողովրդավարությունները լինում են տարբեր, սակայն, դրանով հանդերձ, պետք է համապատասխանեն այդ հասկացությանը: Ինչ վերաբերում է մեզ, Հայաստանի քաղաքական համակարգը պետք է համապատասխանի առնվազն որոշ խումբ հատկանիշների, այդ թվում՝

1) Իշխանությունների տարանջատում. օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների անկախություն:

2) Օրենքի գերակայություն. օրենքը վեր է ցանկացած հեղինակությունից, ցանկացած անձնավորությունից, և նրա մեկնաբանությունը տրվում է միայն անկախ դատարանի կողմից:

3) ՁԼՄ-ների ազատություն. զանգվածային լրատվության միջոցները վերահսկողության ենթակա չեն, բացի այնպիսի հարցերից, որոնք նախատեսված են օրենքով:

4) Քաղաքական մրցակցություն. սոցիալիստների իրական ազատությունը պետք է ուղի հարթի Հայաստանի քաղաքական կուսակցությունների կազմավորման համար: Նրանք պետք է հնարավորություն ունենան պայքարելու քաղաքական իշխանության կենսագործման իրավունքը նվաճելու համար՝ հայ հասարակությանը առաջադրելով համազգային ծրագրեր և լիդերներ՝ հանրային պաշտոններ զբաղեցնելու համար:

5) Իշխանությունների փոխելիություն, ազատ ընտրություններ. ընտրություն-

ները ազատ են ճանաչվում ոչ միայն այն պատճառով, որ ձայների անմիջական հաշվարկման ժամանակ չեն եղել մեքենայություններ, այլև այն բանի շնորհիվ, որ իշխանության գլուխ կանգնած ուժերն իրապես զրկված են իրենց դիրքն օգտագործելու հնարավորությունից՝ ընտրություններում հաղթանակի հասնելու կամ այլ ուժերի գործունեությունն արգելակելու միջոցով: Այս պայմաններում իշխանությունների փոխելիությունը դառնում է իրականություն կամ **ազգային հիմնարժեք:**

Թվարկված հատկանիշներին կարելի է ավելացնել նորերը, օրինակ՝ ձեռնարկատիրության ազատությունը և մարդկային, ազգային իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Համոզված ենք՝ վերը բերված հինգ հատկանիշներն արդեն իսկ ապահովում են նաև դրանց կենսագործումը: Այդ հատկանիշներն էլ հենց ժողովրդավարության հիմնական ինստիտուտներն են:

Ի դեպ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, իսկական ժողովրդավարությունն առկա է միայն այն դեպքում, եթե նրա հիմնական ինստիտուտները գոյություն ունեն միաժամանակ: Սոսկ ազատ ընտրությունները բավարար չեն¹²: Լինում են անկատար ժողովրդավարություններ, որոնցում այդ ինստիտուտների մի մասը կամ բոլորը միասին գործում են ոչ լրիվ, թերի, անհետևողականորեն կամ խախտումներով: Ժամանակ առ ժամանակ հասուն ժողովրդավարական երկրներում ևս լինում են խախտումներ: Տպավորություն կարող է ստեղծվել, թե այստեղ նսեմացվում են ժողովրդավարական ինստիտուտներն ու արժեքները: Սա վտանգավոր պատրանք է. գործնականում նկատի ունենք ոչ թե իդեալը, այլ կոնկրետ-քաղաքական իրականությունը, այսինքն՝ առանձին երկրում ժողովրդավարության հասունության կոնկրետ մակարդակը: Այն պետք է բավարար լինի երկրի ազգային-ժողովրդավարական արդիականացման համար: Հայաստանի քաղաքական համակարգի փոխակերպման ներկայիս բախտորոշ հանգրվանի հիմնական խնդիրը ազատ, ժողովրդավարական և իրավական ազգապետության հիմքերի ամրապնդումն է, որտեղ ներդաշնակորեն զուգակցվում են ինչպես բոլորի կողմից ընդունված ժողովրդավարական արժեքները, այնպես էլ հայ հասարակության պատմամշակութային ավանդույթներն ու ազգային գերակայությունները: Դրա համար անհրաժեշտ է՝

ա) ամրապնդել զսպումների և հակակշիռների համակարգը պետական իշխանության ճյուղերի միջև, բարձրացնել դրանց օրգանական փոխազդեցության արդյունավետությունը,

բ) որակապես ընդլայնել իշխանության ներկայացուցչական մարմինների լիազորությունները,

գ) ստեղծել պայմաններ քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման համար, մշակել պետական կառավարման որակապես նոր մոդել՝ կորպորատիվ կառավարման, արդյունավետության, թափանցիկության, հասարակությանը պարբերական հաշվետվության ժողովրդավարական սկզբունքներով և մեխանիզմներով՝ հաշվի առնելով աշխարհի զարգացած երկրների առաջավոր փորձը,

դ) արդիականացնել Հայաստանի գործադիր իշխանության կառուցվածքը՝ պետական որոշումների մշակման գործընթացին հասարակության գործուն մասնակցության ապահովման նպատակով,

12 Տե՛ս **Закария Ф.**, Будущее свободы: неолиберальная демократия в США и за их пределами. М., "Ладомир", 2004, с. 52-62.

ե) որակապես վերափոխել իրավակիրառական պրակտիկան և ամրապնդել իրավակարգը: Ընդ որում՝ ժողովրդավարությունն ու իրավակարգը անբաժան են և մեկը չի կարող գոյություն ունենալ մյուսից անկախ,

զ) ստեղծել պայմաններ տեղական ինքնակառավարման որակական փոփոխությունների համար,

է) աջակցել ՁԼՄ-ների ազատության և սոցիալ-ազգային պատասխանատվության ներդաշնակ զուգորդմանը,

ը) ամրապնդել հայ ժողովրդի միասնությունն ու համերաշխությունը. համազգային կոնսենսուսն անհնար է առանց հայ հասարակության ազգային-ժողովրդավարական արդիականացման գերագույն արժեքների՝ հայրենասիրության, ժողովրդավարության և արդարության,

թ) էապես բարձրացնել հանրային խորհրդի հեղինակությունը, ընդլայնել նրա պրակտիկ գործունեության և պատասխանատվության ոլորտը՝ այն դարձնելու համար մասնակցային ժողովրդավարության կարևորագույն ինստիտուտ, ինչի զարգացման մակարդակը քաղաքացիական հասարակության և պետության նոր որակի կարևոր չափանիշն է:

Հայաստանի արդիականացումը պահանջում է, որպեսզի հետևողականորեն կիրառվի իշխանությունների տարանջատման սկզբունքը: Միայն այդ դեպքում կապահովվեն դատական իշխանության անկախությունը, արդարադատության քուլտիվացիան հաղթահարումը, դատական համակարգից քաղաքացիների սոցիալ-իրավական օտարման մեղմացումը: Օրենքի գերակայության ապահովումը ևս անմիջականորեն ուղղված է ավտորիտարիզմի դեմ: Հայաստանում ավտորիտար իշխանության ցանկացած գործողություն, որն ուղղակիորեն խախտում է գործող օրենսդրությունը կամ նրա կամայական մեկնաբանությունը՝ դատարանի կամ քննության վրա ճնշում գործադրելու նպատակով, պետք է ճանաչվի ապօրինի և հակաօրինական: Դ-ա, անկասկած, նույնպես կնպաստի արդարադատության ուժեղացմանը, նրա նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը: Գործուն արդարադատությունը բյուրոկրատիզմի և կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմ է: Ճիշտ այդպես էլ օրենքի շրջանակներում գործող հանրային ինստիտուտները, որոնք վայելում են քաղաքացիների վստահությունը, պետք է ավելի հետևողականորեն պայքարեն կլանայնության, կլիենտելիզմի դեմ: Դ-ա հնարավոր է այն դեպքում, եթե Հայաստանի հանրային ինստիտուտները սկսեն իրականացնել քաղաքացիների իրավունքների, ազատությունների և շահերի պաշտպանության՝ իրենց վերապահված իրավական գործառույթները:

Անհրաժեշտ է բաժանել ոչ միայն իշխանությունն ու սեփականությունը, այլև գործադիր իշխանությունն ու նրա նկատմամբ վերահսկողությունը, ստեղծել թափանցիկության ապահովման մեխանիզմ, նրա գործունեությունն ապահովել օրենսդրորեն: Միայն թափանցիկության նոր մեխանիզմը կստիպի իրավապահ մարմիններին, առաջին հերթին՝ դատարաններին, ապահովելու օրենքի պահպանումը և՛ իշխանության, և՛ բիզնեսի, և՛ քաղաքացիների կողմից:

Այնքանով, որքանով սոցիալ-քաղաքական թափանցիկությունը իշխանությանը կհարկադրի գործել կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, արհմիությունների հետ մրցակցության պայմաններում, այդքանով իշխանությունը կդառնա ավելի պատասխանատու, և որպես դրա հետևանք՝ ավելի ձեռնհաս և իրավասու: Դ-ա անխուսափելիորեն կկանխորոշի, **առաջին**, իրավա-

կան բազայի և իրավակիրառական պրակտիկայի զարգացումը, ինչն, անտարակույս, Հայաստանի ազգային-ժողովրդավարական արդիականացման նախագծի առաջնահերթություններից է: **Երկրորդ**, պայմաններ կստեղծի մասնավոր սեփականության և պայմանագրային հարաբերությունների ինստիտուտի, առհասարակ, օրենքների նկատմամբ հարգանքի դաստիարակման համար՝ օգտագործելով պետության, կրթական, դատական և այլ համակարգերի բոլոր հնարավոր լծակները: Կբարձրանա մասն քաղաքացիական հասարակության կառուցվածքային դերակատարությունը, քանի որ մասնավոր սեփականության ինստիտուտի ամրապնդումը միաժամանակ մարդու իրավունքների և ազատությունների երաշխիքի հիմքն է: **Երրորդ**, կբարձրացնի տնտեսության պետական կարգավորման արդյունավետությունը, ինչը հաջողությամբ կհակազդի կոռուպցիային, բյուրոկրատիզմին:

Արդիականացման կարևոր սոցիալական գերակայություններից է օրենքը պահպանելու անհրաժեշտությունը, որը Հայաստանի քաղաքացիներին կստիպի պատասխանատվությամբ կատարել իրենց սահմանադրական պարտականությունները: Դա անհնար է առանց թափանցիկության նոր մեխանիզմի, որը կարող է խթանել քաղաքացիների և քաղաքացիական ինստիտուտների՝ ՉԼՄ-ների, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ակտիվությունը իշխանության գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողություն իրականացնելու ոլորտում: Վերջապես, թափանցիկության նոր մեխանիզմը կխթանի քաղաքացիական ակտիվության աճն ընտրությունների ժամանակ: Արդյունքում հայ հասարակությունը, բարձրացնելով իր ինքնակազմակերպման և քաղաքացիական նախաձեռնությունների, իրավական և քաղաքական մշակույթի մակարդակը, կարող է վերածվել արդյունավետ հասարակության:

Ավտորիտարիզմից, բյուրոկրատիզմից և կոռուպցիայից ձերբազատվելու գործում անգնահատելի է քաղաքական և տնտեսական մրցակցության դերն ու նշանակությունը: Առհասարակ՝ մրցակցությունը ցանկացած սոցիալ-ազգային օրգանիզմի հավերժական երիտասարդության կենսահյուսն է: Մրցակցությունը կատարում է բնական ընտրության գործառույթը, որը գործում է կենդանի բնության մեջ, սակայն որից մարդը հեռացել է՝ իր համար ստեղծելով մշակույթի թաղանթ¹³: Հայտնի է, որ մրցակցային շուկան գործում է միայն այն ժամանակ, երբ սեփականության իրավունքը պաշտպանված է օրենքով և ինստիտուտներով, որոնք ապահովում են նրա բնականոն գործառնությունը: Այլապես շուկան կվերածվի ջունգլիի կամ լճացած ճահճի՝ ծածկված բազմաթիվ անարդյունավետ կանոնակարգումների և ոչ ֆորմալ կապերի սոցիալական ցանցերով:

Ցավոք, Հայաստանում շարունակում են նախընտրել «Դու ինձ, ես քեզ» տիպի երկարաժամկետ փոխադարձ պարտավորությունները: Դա վերաբերում է նաև քաղաքական մրցակցությանը: Ռուսաստանի ընտրված նախագահ Վ.Պուտինի խոսքերով՝ «Քաղաքական մրցակցությունը ժողովրդավարության նյարդն է, նրա շարժիչ ուժը: Եթե այդպիսի ժողովրդավարությունն արտացոլում է սոցիալական խմբերի իրական շահերը, այն բազմակիորեն ուժեղացնում է պետության «հզորությունը» տնտեսության զարգացման ապահովման, սոցիալական նախագծերին ուղղված ռեսուրսների համախմբման մեջ: Քաղաքացիական արդա-

13 Տե՛ս **Уинтер С.**, Конкуренция и отбор. М., ИНФРА, 2004, с. 134-145.

րության և պաշտպանվածության ապահովման մեջ»¹⁴: Իսկ արևմտյան տնտեսագետ և քաղաքագետ Ի.Շումպետերը իրավացիորեն գտնում է, որ ժողովրդավարության համար մրցակցությունն անհամեմատ ավելի կարևոր ինստիտուտ է, քան քաղաքացիների մասնակցությունը, զարգացած քաղաքացիական հասարակությունը: Մասնակցությունը քաղաքացիների իրավունքն է, որից նրանք կարող են և չօգտվել: Քաղաքական կյանքին ակտիվորեն մասնակցելուն անպատրաստ մարդիկ, անկասկած, չեն կարող մասնագիտորեն արժեքավոր դատողություններ անել հասարակական-քաղաքական բազմաթիվ պրոբլեմների վերաբերյալ: չենց դրա համար էլ անհրաժեշտ են կուսակցություններ¹⁵:

Այսօր, երբ հետխորհրդային երկրներում անցում է կատարվում ժողովրդավարացման նոր փուլին, կարևորվում են ոչ միայն առանձին քաղաքական անհատի ֆիզիկական նկարագրի առանձնահատկություններն ու անձնական հայացքները, այլև այն, թե որքանով է նա իր նախընտրական պլատֆորմում հենվում կուսակցության ու կուսակցական գաղափարախոսության վրա: Այստեղից էլ լուրջ և լրացուցիչ պահանջներ են առաջադրվում Հայաստանի քաղաքական կուսակցություններին: Թեև նրանք դանդաղորեն են հասունանում ու ծավալում լիարժեք ներկուսակցական պայքար, այնուամենայնիվ, վաղ թե ուշ այս գործընթացը կհանգեցնի խելամիտ պրայմերիզի, այսինքն՝ կուսակցական աշխատանքի ի հայտ գալուն: Եվ որպես քաղաքական պայքարում հաջողության վկայություն՝ կուսակցությունները ոչ միայն տեղեր կստանան Հայաստանի Ազգային ժողովում, այլ նաև կհավակնեն նախագահի աթոռին: Հայաստանի համար, անտարակույս, սա ավելի շուտ՝ հեռավոր իդեալ է: Սակայն հայ հասարակության արդիականացման նախագծերի և առաջարկությունների շուրջը կուսակցական բանավեճերն ու քաղաքական քննարկումները կարող են մեր հասարակությանը պաշտպանել ճահճացումից, ինչպես նաև քաղաքական-կուսակցական մենաշնորհներից: Քաղաքական մրցակցությունը, ի լրումն տնտեսական մրցակցության, իշխանությունների բաժանման, օրենքի գերակայության, ՉԼՄ-ների ազատության, ինչպես նաև իշխանության փոփոխելիության և ազատ ընտրությունների կենդանի բովանդակությունն է: Իհարկե, կարելի է պնդել, որ ասվածը ծեծված դատողություն է, սակայն չէ՞ որ մյուս կողմից **ծեծված**՝ նշանակում է նաև բոլորի կողմից ճանաչում ստացած: Այսինքն՝ վերոնշյալ ինստիտուցիոնալ խոչընդոտների հաղթահարման գործում ճիշտ է ժողովրդավարական ինստիտուտների կարևորության ընդգծումը:

Անկասկած, վերոբերալ փաստարկներին կարելի է հակադրվել «հակափաստարկներով»: Ասել, օրինակ, թե իբր՝ հայ հասարակությունը դեռևս անպատրաստ է համակարգային ժողովրդավարացմանը, և որ այս դեպքում երկրի կայունության համար կարող են սպառնալիքներ ստեղծվել: Կամ՝ երկրի նախագահը և նրա խորհրդականները սկզբունքորեն կարող են մարզպետի պաշտոնի համար ընտրել ավելի կրթված և իրավասու թեկնածուներ, քան կուսակցությունները և տեղական ընտրանին: Գաղտնիք չէ, որ հաճախ տեղական ընտրանին դեկավավորվում է հիմնականում նեղ օգտապաշտական, իսկ երբեմն էլ՝ քրեական շահերով: Սակայն չպետք է մոռանալ, որ առաջին դեպքում փոխվում է մարզպետի դերը, նրա պատասխանատվությունն ընտրողների առաջ, քանի որ նա դառնում է կենտ-

14 **Путин В.В.**, Демократия и качество государства, “Коммерсант”, 06.02.2012.

15 Տե՛ս **Шумпетер И.**, Капитализм, социализм и демократия. М., “Экономика”, 1995, с. 354-358.

րոնական իշխանություններին հլու-հնազանդ «զինվոր», հետևաբար՝ նվազ նախաձեռնող և նվազ պատասխանատու: Դիշտ նույն պատճառներով Ազգային ժողովը հաճախ դառնում է ծաղրանքի առարկա: Իսկ եթե այն լինի իսկապես անկախ, ապա Ազգային ժողովը կարող է սահմանափակել ՀՀ նախագահի և կառավարության գորաշարժերի ազատությունը՝ ստիպելով գնալ անհրաժեշտ քաղաքական փոխզիջումների, ձևավորել քաղաքական քննարկումների, բանավեճերի և ընդհանուր համաձայնության (կոնսենսուսի) հասնելու մշակույթ:

Իսկ ԶԼՄ-ների ազատությունը հայ հասարակությանը կարող է ապահովել իշխանությունների գործողությունների, բյուրոկրատական աղավաղումների, կոռուպցիայի, կլիենտելիզմի բացասական դրսևորումների մասին անհրաժեշտ տեղեկություններով: Արտահայտելով տարբեր հայացքներ՝ ԶԼՄ-ները Հայաստանի քաղաքացիներին հնարավորություն կտան սեփական կարծիք կազմելու տեղի ունեցող իրադարձությունների մասին:

Ասվածի համատեքստում կրկին անդրադառնալով կոռուպցիային, նշենք, որ ռուսաստանյան «Ռոմիր» անկախ հետազոտական հոլդինգի կողմից Հայաստանում անցկացված հարցումները ցույց են տվել, հարցվածների կեսը գտնում է, որ վերջին երեք տարիներին մեզանում կոռուպցիայի մակարդակը բարձրացել է, և մարդկանց միայն 15 տոկոսն է կարծում, թե նկատվում է նվազեցման միտում: Մնացած 35 տոկոսը համոզված է, որ կոռուպցիան մնացել է նույն մակարդակին: Հարցվածների 53 տոկոսը (անցյալ տարի այս ցուցանիշը ցածր էր՝ 48 տոկոս) գտնում է, որ կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերն անարդյունավետ են. ֆինանսական միջոցներ շատ են ծախսվում, իսկ օգուտն աննշան է¹⁶:

Մեր համաքաղաքացիների կարծիքով՝ երկրում ամենից կոռումպացված է կրթության ոլորտը, այնուհետև՝ ոստիկանությունը և դատական համակարգը: Այստեղ մենք նորից ի հայտ ենք բերում կոռուպցիայի սոցիալ-քաղաքական արմատները, բախվում նախապատճառների ճանաչման և վերացման հիմնախնդրի հետ: Անկասկած, կոռուպցիան **նախ**՝ գործառնում է որպես ռեսուրսների, ռենտայի և սոցիալական կարգավիճակների վերաբաշխման մեխանիզմ ոչ միայն իշխանության և բիզնեսի, այլև տարբեր սոցիալական խմբերի միջև: Դա նշանակում է, որ փողի օգնությամբ կարելի է նախապես ապահովել ոչ միայն պետության աջակցությունը, այլև ձեռք բերել լրացուցիչ մրցակցային հնարավորություններ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: **Երկրորդ**, տարբեր մասնագիտական խմբերի որոշ ներկայացուցիչներ կոռուպցիոն եկամուտների կամ ծառայությունների փոխանակման օգնությամբ սեփական կարգավիճակն ու կենսամակարդակը կարող են «ձգել-հասցնել» մինչև այնպիսի նշանաձողի, որը համապատասխանում է իրենց աշխատանքի սոցիալական նշանակալիությանը: Ընդ որում՝ այնպիսի նշանակալիության, որը համարժեք չի գնահատված պաշտոնական աշխատավարձերով կամ ձևախեղված շուկայով: Վերջապես՝ **երրորդ**, կոռուպցիան նաև յուրօրինակ ոչ ֆորմալ հասարակական դաշինքի կարևոր տարրերից է: Բանն այն է, որ Հայաստանում օրենքը շրջանցելու և փող տալով ազատվելու հնարավորությունը հաճախ գործում է որպես մեխանիզմ, որն արդարացնում է իշխանության գործերին չմիջամտելու՝ որոշ խավերի պասիվ քաղաքական կեցվածքը: Վերջապես, Հայաստանում կոռուպցիան վերածվել է քաղաքա-

16 Տե՛ս «Голос Армении», 14 декабря 2010 года.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼՈԳԻԱ
Գ (Գ) ԳՐԱԳԻՒՄ ՔՅՈՒՄ 1 (37) ԽՈՆՎԱՐ-ՄԱՐԿԻ, 2012
ՎԵՄ համահայկական հանդես

կան ընտրանու մեջ մտնող խմբերի հարաբերությունները պարզելու յուրօրինակ հրապարակի. բանավեճերը և կոնֆլիկտները հիմնականում ծավալվում են տնտեսական, քաղաքական և սոցիալական կառուցվածքների, այլ ոչ թե բուն կոռուպցիայի էության շուրջը:

Բազմաթիվ զարգացած երկրներում հաջողվել է նվազեցնել կոռուպցիայի մասշտաբները՝ փոխելով հասարակության, նրա տարբեր խավերի վերաբերմունքն այդ երկրներում Յանուսի նկատմամբ: Սոցիալական վերաբերմունքի փոփոխությունը հենց այն է, ինչը առանձին երկրներում աշխուժացրել է պայքարը կոռուպցիայի դեմ: Թեև, ինչպես վկայում են «Համաշխարհային կոռուպցիայի բարոմետր-2010» հետազոտության արդյունքները, որն անցկացվել է Transparency International միջազգային կազմակերպության կողմից, Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում նկատվում է կոռուպցիայի ընկալման փոփոխության հետաքրքիր միտում: Համապատասխանաբար՝ հարցվածների 73 և 67 տոկոսը գտնում է, որ վերջին երեք տարիներին աճել է կոռուպցիայի մակարդակը: Չնայած դրան՝ հարցումը նաև ցույց է տվել, որ յուրաքանչյուր տասը հարցվածից յոթը պատրաստ է հայտնել՝ տեղեկացնել կոռուպցիայի փաստերի մասին¹⁷: Դա այն է, ինչը հայ հասարակությանն այսօր կենսականորեն պակասում է:

Ըստ սոցիոլոգների, Հայաստանում չկան քաղաքացիականության, ժողովրդավարության կենդանի տիպարներ, օրենքի և օրինականության ջերմեռանդ պաշտպաններ, օրինականության իսկական նվիրյալներ: Այդպիսին չեն, ցավոք, նաև արվեստի, գրականության և գիտության անվանի գործիչների նշանակալի մասը: Մյուս կողմից, Հայաստանի իշխանությունները թեև մշակել են կոռուպցիայի դեմ պայքարի ծրագիր, սակայն նրանում հաշվի չի առնված անձնական շահը, նրա ինստիտուցիոնալացման անհրաժեշտությունը: Առանցքային միտքն այն է, որ շուկայական տնտեսություն ունեցող հասարակության մեջ, որտեղ հստակ սահմանված են ու պաշտպանվում են սեփականության իրավունքները, իրականացվում է առողջ տնտեսական քաղաքականություն, անձնական շահի, օգուտի մոտիվները կարող են նշանակալի դեր խաղալ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման գործում: Նախևառաջ, անձնական շահի մոտիվը կարող է սեփականատերերին ստիպել պաշտպանելու իրենց սեփականությունը: Նույն մոտիվը քաղաքացիներին կարող է ստիպել աջակցելու իշխանություններին՝ օրինազանցների հայտնաբերման գործում: Սեփականատերերը պարզավճար կարող են սահմանել կասկածյալներին վերաբերող բացահայտիչ տեղեկությունների համար, շահագրգռված լինելով, որ երկրում լինեն ամուր և արդյունավետ պետական ինստիտուտներ, այդ թվում՝ ոստիկանություն, դատարաններ և կառավարություն, որոնք ունակ են պաշտպանելու քաղաքացիների շահերը:

Հասարակության մեջ, որտեղ պետությունը ժողովրդին է ծառայում, քաղաքացիների անձնական շահը դառնում է կոռուպցիային դիմակայող, պետությանը հասարակական աջակցություն ապահովող կարևոր գործոն: Եվ ընդհակառակը, երբ պետությունը հակադրված է հասարակությանը, անձնական շահը գործում է ընդդեմ պետության, և այդ ժամանակ կոռուպցիայի դեմ պայքարի բոլոր ջանքերն իզուր են:

Հայ հասարակությունը գիտակցում է ինստիտուցիոնալ արգելքների, սոցիո-

17 Տե՛ս «Голос Армении», 14 декабря, 2010 года.

մշակութային խոչընդոտների վերացման անհրաժեշտությունը և մերժում է «ընտրողական արդարադատությունը», որը դարձել է գործիք նրանց ձեռքում, ովքեր այն օգտագործում են իրենց մասնավոր, խմբակային շահերի օգտին: Հասարակությունը մերժում է այն արատավոր պրակտիկան, երբ օրենքը ընտրողաբար կիրառվում է առաջին հերթին՝ իշխանությունը կրողների կողմից, այլ ոչ թե նրանց նկատմամբ: Այսօր, ավելի քան երբեք, պահանջվում է օրենքի և օրինականության գերակայություն, հասարակական և անհատական լիիրավ կյանք՝ ըստ քաղաքակրթության կանոնների, որոնք բոլորի համար նույնն են և ապահովում են հայության ազգային-քաղաքական համակեցության սկզբունքների պահպանումն ու զարգացումը:

Խնդիրն այն չէ, թե մեզանում չկան հստակ ձևակերպված օրենքներ, այլ այն, որ տարբեր մակարդակներում բազմաթիվ մարդիկ չեն ցանկանում հաշվի նստել դրանց հետ, եթե դա իրենց ձեռնառու չէ կամ նման հնարավորություն ունեն: Կարծես թե Հայաստանում գոյություն ունեն ուրիշ կանոններ, ոչ ֆորմալ ինստիտուտներ, «կյանք՝ ըստ կիսաքրեական օրենքների», որոնց խախտումը պատժվում է այլ կերպ, հաճախ՝ ավելի անխուսափելիորեն, քան դա կարող է անել օրենքը:

Օրենքի գերակայության հաստատման համար անհրաժեշտ է պետության և նրա ներկայացուցիչների պրակտիկայից բացառել օրենքի կիրառման բացասական նախադեպերը: Հաճախ կարելի է լսել, թե իբր՝ հայերիս ավանդաբար ներհատուկ է իրավական նիհիլիզմը, յուրօրինակ պետականամերժությունը: Թե իբր դա մեր պատմության և մշակույթի արժեքներից է: Մեր տարբերությունը Արևմուտքից՝ կարծեցյալ «օրինամերժությունը», միանգամից «չքանում» է, երբ Հայաստանի քաղաքական դեկավարության հռչակագրերը համեմատում ենք նրա իրական գործողությունների հետ, երբ օրենքը կիրառվում է ընտրողաբար՝ հենց իշխանության կրողների կողմից, այլ ոչ թե նրանց նկատմամբ:

Օրենքի գերակայությունը հնարավոր է հաջողությամբ ապահովել, եթե ստեղծվեն որոշակի նախադրյալներ և ամենակարևորը՝ երաշխիքներ, գործադիր իշխանությունից և կուսակցական մենաշնորհից նրա անկախության և իշխանավորների տիրապետող ազդեցության բացառման համար: Այսինքն՝ օրենքի գերակայությունը պահանջում է իշխանության բաժանում, իշխանության և սեփականության հստակ սահմանազատում և քաղաքական ժողովրդավարություն՝ ի ապահովումն տնտեսական ազատ մրցակցության: Այստեղից էլ հետևում է ազատ ընտրությունների և ազատ ընկերակցությունների կարևորությունը, որպեսզի քաղաքական բանավեճերի առաջավոր գիծ դուրս գան այլընտրական ծրագրերից ու առաջնորդներից իրականները, այլ ոչ թե դրանց խղճուկ նմանակումները:

Այս ավելի քան պարզ ու հստակ ճշմարտությունների գիտակցումը մեր հասարակության գգալի մասի կողմից թույլ է տալիս եզրակացնել, որ ներկա խորհրդարանական ընտրապայքարի հետ կապված՝ մեզանում կրկին շահարկվող Հայաստանի ընտրազանգվածի քաղաքական անպատրաստվածության մասին վկայակոչումները միգուցե սրանից հինգ-վեց տարի առաջ ինչ-որ հիմքեր ունեին: Սակայն այդօրինակ փաստարկներն այսօր ամբողջովին կորցրել են իրենց ուժը: Արտաքին ու ներքին մարտահրավերները մեր երկրին այլ ընտրություն չեն թողել: Հարկավոր է բեկում երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական առաջընթացի մեջ, որն ունակ է արժանապատիվ պատասխան տալու նման սպառնալիքներին:

Հարկավոր է ընդունել այս պարզ և միաժամանակ՝ դրամատիկ ընտրությունը: Թող մեզ առաջնորդի հաջողության մասին Վերգիլիոսի անմահ պատգամը՝ «Audes fortuna juvat» («Ճակատագիրը հովանավորում է խիզախներին»):

Summary

THE INSTITUTIONAL OBSTACLES TO ARMENIA'S MODERNIZATION

Thoughts of a Political Scientist on the Eve of Parliamentary Elections

Manuk A. Harutyunyan

The article is devoted to the study of the fundamental institutional and socio-cultural obstacles to Armenia's modernization. It is shown that the main component of Armenia's authoritarian political system is the corporate state, whose economic elite and state departments have united to form a coarse managerial heirachy. Presented are the barriers to the country's road to modernization: political corruption, legal nihilism, clientelism and other negative phenomenon.

In order to overcome these, the author proposes and bases his argument that the content of the national-democratic program of Armenia's modernization and the fundamental conditions of its realization, is the principle of connecting democracy with patriotism and justice.